*ՀՐԱՆՏ ՍՐԿ. ԿՈՍՏԱՆՅԱՆ*

# ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Կյանքը երթ է, որ սկսվում է մի կետից և գալիս-կանգնում միևնույն կետին: Այս ճանապարհին անհնար է չունենալ վրիպումներ:

Մկրտության խորհրդով մենք վերածնվում ենք, մաքրվում և ամբողջական հաղորդակցության մեջ մտնում մեր Երկնավոր Հոր հետ, իսկ երբ շեղվում ենք ճշմարիտ ուղուց, ընկնում ենք մեղքի ճիրանները: Ապականությունը բնակություն է հաստատում մեր մեջ և ժամանակ առ ժամանակ ալեկոծում մեր ներաշխարհը, խորապես ցավ պատճառում մեր հոգուն: Մենք կորցնում ենք հաղորդակցությունը մեր Արարչի հետ, քանզի աղտոտում ենք մեզ, իսկ մեր Տեր Աստված մաքրություն է, սրբություն:

Ի՞նչ ընդհանրություն ունի խավարը լույսի հետ:

Մեղքից ձերբազատվելու միակ միջոցն ապաշխարությունն է: Այն մեր ողջ կյանքում ուղեկցում է մեզ, քանզի մեր կյանքը մեղանչական է, բայց «Աստծո քաղցրությունը մեզ դեպի ապաշխարություն է առաջնորդում» (հմմտ. Հռոմ. Բ 4):

Ապաշխարել նախևառաջ նշանակում է զղջալ: Զղջման զգացումն առաջ է գալիս կատարած հանցանքի վնասակարության գիտակցումից և ուղեկցվում է հեծեծանքով, լացով, սխալը չկրկնելու վճռականությամբ:

Զղջացողն անդրադառնում է իր գործած մեղքերին և կարիքն զգում դրանք խոստովանելու: Խոստովանությունը կատարվում է օծյալ հոգևորականի առջև, քանի որ միայն օծյալ հոգևորականն իշխանություն ունի մեղքերին թողություն տալու:

«Եթե մեկի մեղքերը ներեք, նա ներված կլինի» (Հովհ. Ի 22):

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18):

Խոստովանությունը լինում է թե՛ հրապարակավ, և թե՛ առանձնական: Առանց մեղքերից արձակում ստանալու ակնկալության խոստովանությունը թերի է: Մեղքերի շարքն ընթերցելուց հետո քահանան խոստովանողին արձակում է մեղքերից, բայց քահանան չէ, որ թողություն է տալիս, այլ քահանայի միջոցով ինքը՝ Հիսուս Քրիստոս:

Երբ որ մեղք ենք գործում, կամա թե ակամա վնասում ենք մեզ, մեր նմանին, և քանզի վնասել ենք, պարտավոր ենք բարեգործությամբ և նույնիսկ զրկանքների գնով ջնջել մեղքը, որպեսզի մեր խիղճը խաղաղվի:

Մեղքը սիրո բացակայությունն է, զոհողությունը՝ սիրո երախտիքը:

«Մեղքի վարձը մահն է» (Հռոմ. Զ 23), ապաշխարության պտուղը՝ Հաղորդության սուրբ խորհրդին մասնակցությունը, փրկությունն ու հավիտենությունը:

Երբ մեղանչում ենք, հավիտենական պատիժ է մեզ վերագրվում, բայց մեր զղջալու և փոխվելու դեպքում Աստված նաև մեր պատիժն է փոխում ժամանակավորի:

«Աստված, անգիտության ժամանակներն անտեսելով, այժմ պատվիրում է մեզ, որ ապաշխարենք» (Հմմտ. Գործք ԺԵ 30):

Ամենողորմ Տե՛ր, որ ինձ համար ապաշխարության ճանապարհ ես պատրաստել, ուսուցանի՛ր ինձ ճշմարտապես ապաշխարել ոչ միայն նրա համար, որ նողկալի է մեղքի մեջ մնալը, այլև քանզի հեռացել եմ քո սիրուց՝ կենաց աղբյուրից, որից խմելով՝ մոռանում եմ, թե ինչ է ծարավը: Եվ այժմ առավել քան երբևէ բարձրագոչ են Քո նախընթաց կանչն ու քարոզը.

«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Դ 17):